

## „ՄՈՒՐՃԻ-Ի ԱՍՑԵԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ներկայ համարով՝ «Մուրճ» ամսագիրը լրացնում է իւր չորս ամեայ շրջանը. յաջորդ համարով՝ նա կը մտնի հինգերորդը։ Մենք օպտուում ենք այդ դէպքից մի ընդհանուր տեսութիւն տալու «Մուրճ»-ի ցայժմեայ գործունէութեան և նորա հանգամանքների մասին, ամսագրի ընթացքը և ուղղութիւնը պարզելու համար, մանաւանդ որ արդէն երեք տարի է մի այդպիսի տեսութիւն տւած չենք հայ ընթերցող հասարակութեան։

Ինչ է եղել մեր ջանքը։

Մեր ջանքը եղել է՝ «Մուրճ»-ը դարձնել մի օրդան ժամանակակից յառաջդիմութեան համար։ Այդ մոքած նա հիմնել է, և մենք աշխատել ենք «Մուրճ»-ին այն ուղղութիւնն ու ընթացքը տալ, որ նա անշեղ կերպով այդ նպաստակին ծառայի։

Յառաջդիմութիւնը իմացւում է ներկայի համեմատութիւնից անցեալի հետ, և այս դէպքում՝ որքանով որ նա կապւած է «Մուրճ»-ի հետ. իսկ «Մուրճ»-ի դիրքը ներկայիս մէջ՝ կարող է իմացւել նրանից թէ որչափով նա կանգնած է դրութեան բարձրութեան վերայ, որ նոյնն է թէ որքանով նա համապատասխանում է ժամանակիս պահանջներին, որքան լայն է «Մուրճ»-ի տեսողութեան հորիզոնը համեմատած ժողովրդի կարիքների հետ, որքան են իրար բռնում մէկ կողմից «Մուրճ»-ի ուղղութիւնը, արծարծած խնդիրները, ժամանակի խնդիրներին տւած պատասխանները, ընթերցանութեան համար մատակարարած նիւթերը, —և միւս կողմից մեր ընթերցող հասարակութեան պահանջները, եթէ միայն դոքա վեր չեն այն ոյժերից, որ տալիս է մեզ ժամանակակից սերունդը։ Եւ այդ է

որոշում՝ պահանջների խելացիութեան չափը, և մեր ասածը՝ միայն խելացի պահանջների մասին է:

Մենք ձեռնարկել էինք մի դժւարին գործի. գոնէ այնքան դժւարին, որ այս վերջին երեսուն և հինգ տարիներում արւած ջանքերը խորտակւել էին մի ընդհանուր կրթական ամսագիր երկար տարիներ շարունակելու դժւարութեան դէմ և արդարե Հիւսիսափայլը, «Կոռունկ», «Հայկական Աշխարհ», «Փորձ»—դոցանից ամենափայլը, «Կոռունկ», «Հայկական Աշխարհ», «Փորձ»—դոցանից ամենաշատ տևողութիւն ունեցածը առաջինն էր, «Հիւսիսափայլը», որ վեց տարի հրատարակւեց, լինելով կիսով չափ փոքր քան «Մուրճ»-ը, իսկ վերջին ամսագիրը, փորձը ունենալով «Մուրճ»-ի չափ ծաւալ՝ տևեց ոչ աւելի քան չորս ու կես տարի:

Ամսագրի տեղը այդպիսով թափուր էր մնացել Բայց «Մուրճ»-ը չէր եկել ուղղակի նոցա շարունակելու և Հիւսիսափայլը որի հետ «Մուրճ»-ը իւր տեղենցիաներով աւելի մօտ է, շատ էր վազուց անյայտացել, որպէս զի «Մուրճ»-ը գար ուղղակի նորան շարունակելու համար. Հիւսիսափայլ-ի և «Մուրճ»-ի միջերքում կայ մի ժամանակամիջոց, երբ այն դերը, որ կարող էր կատարել այսպէս ասած մի վերանորոգւած Հիւսիսափայլը, կատարեց «Մշակ» լրագիրը, որքանով որ մի լրագիր տռհասարակ կարող էր ամսագրի աեղը տալ:

1889 թւականին սկսեց լոյս տեսնել «Մուրճ»-ի: Աւելի քան որ և իցէ մէկը նախկին ամսագիրներից՝ «Մուրճ»-ը սկսեց կեանքի հետ գործ ունենալ, որ և արտայայտում է նորա բաժինների բազմակողմանիութիւնով և բազմաթիւ նոր մարդկանց գրական ասպարէզ դուրս գալով: Չորս տարի առաջ մենք դեռ չը գիտէինք թէ ովքեր էին լինելու մեր տևողական աշխատակիցները. մենք միայն գիտէինք թէ ինչ ուղղութեան տէր մարդիկ կարող էին համակրել «Մուրճ»-ին, մենք գիտէինք որ միայն մի աւելի հասուն երիտասարդութիւն կարող է լինել մեր աջակիցը, միայն նորա միջից կարող են դուրս գալ նոր մարդիկ՝ «Մուրճ»-ի ձգտումները հասկացող, գնահատող և նոցա համակրող, հետեապէս և ամսագրին աշխատակցող: Ամսագրական ոյժեր «Մուրճ»-ի համար պատրաստի չը կային, որովհետեւ չէր կարելի յոյսեր դնել այնպիսի ոյժերի վերաց, որոնք իրանց ոգով, ուղղութիւնով, աշխարհայեցողութիւ-

նով, զգացմունքներով, քաղաքականութիւնով ոչ մի մտերմութիւն չէին կարող զգալ իրանց տրադեցիաներին հակառակ մի օրգանի հետ, որքան էլ նոքա յայտնի լինէին իրբե գրողները Խոկ նախկին ամսագիրներից մնացած ոյժերը ընդհանուր առմամբ հէնց ազգպիտիներն էին: Նոր ուղղութեան ամսագրի համար հարկաւոր էին նաև նոր մարդիկ, թէկուզ գրականութեան մէջ քիչ յայտնի կամ բոլորովին անյալտ աշխատակիցներ, բայց իրանց ուղղութիւնով աւելի մօտ կամ սերտ կտած յառաջդիմական մի օրգանի: Չորս տարի առաջ մի այդպիսի մատք շատերին, և յատկապէս հակառակորդներին, խիմերական էր թւում, և մեր ձեռնարկութիւնը հէնց սկզբից կարծում էին դատապարտած կատարեալ անաջողութեան:

Այլ էին մեր յոյսերը: Եւ այս չորս տարիների փորձը մեզ ապացոյց տւեց որ մի յառաջդիմական ամսագրի շիտակ, լուրջ ու կենդանի վերաբերմունքը դէպի հասարակական խնդիրները միակ հաստատ գրաւականն է՝ հասարակութեան մէջ ամուր արմատ բռնելու, ժամանակիս իդէալներով համակւելու ընդունակ մարդկանց համակրութիւնը վաստակելու և այդ ամենով միասին մամուլի մէջ այն տեղը գրաւելու համար, որ վայելում է մի ամսագրին, որ գրութեան բարձրութեան վերայ կանգնած է ուղում լինել:

Մեզ շըջապատող ժամանակակից մամուլը մեր այդ դիտաւորութեան իրագործումը չը խրախուսեց ոչ մի կերպ: Բոլորովին ընդհակառակը: Մենք ոչ միայն թշնամանքի և ծաղրի հանդիպեցինք այն մամուլից, որ իւր ուղղութիւնով հակառակ պէտք է լինէր «Մուրճ»-ին, այլ և այն մամուլի կողմից, որի գործը շարունակելու համար կոչւած էր այս ամսագրիրը:

Բայց գաղափարը իւր գործը կատարեց, որովհետև ամենազօրեղներն անդամ չը կարողացան արգելք լինել, որ «Մուրճ»-ը յառաջդիմական մի օրգան ճանաչւի և տարեցտարի աւելի ու աւելի տարածւի: Թշնամական վերաբերմունքը նոյնպէս իւր դերը կատարեց, բայց դորա տպաւրութիւնը և ազդեցութիւնը նւազում էր ամեն տարի, և ուր «Մուրճ»-ը, այսպէս ասած, իւր սեպհական ոյժով թափանցում էր՝ նա ապացուցանում էր նաև որ մեր մամուլի վերաբերմունքը դէպի «Մուրճ»-ը հիմնած էր իրանց ընթերցողների կոյր հաւատի վերայ:

Թրախուսական մինչ այժմմենք ոչինչ չենք գտել մամուլի վերաբերմունքի մէջ։ Եւ այդ մենք ասում ենք ոչ թէ գանգատուելու համար, այլ պարզելու համար թէ ինչ պայմանների մէջ «Մուրճ»-ը պէտք է հարթէր իւր ճանապարհը, որ պղոգրէսի ճանապարհն է, մի ճանապարհ, որ լիապէս հարթելու համար դեռ երկար տարիներ քրտնաշան աշխատանք ենք տեսնում հորիզոնի վերայ։ Զընայած որ անցեալում հայերս ամսագիրներ ունեցել ենք, բայց ամսագիրը դեռ ևս չէր դառել մի անհրաժեշտ պահանջ ընթերցող հասարակութեան համար։ Այդ կախած է եղել մեծ մասամբ հասարակութեան անպատճաստ լինելուց, բայց մասամբ նաև այդ ամսագիրների զեկավարների հայեացքից ամսագրի կոչման վերայ։ Այդ պատճառով «Մուրճ»-ի դժւարութիւններից մէկը կապւած էր այն մութն և անորոշ գաղափարների հետ, որ ունեցել են հայերը քաղաքական-հասարակական-դրական ամսագրի մասին։ Մեր խօսքը այն սուար Ա. Ճամասնութեան մասին է, որոնցով պահպանում են պարբերական թերթերը մեզանում առհասարակի ժողովրդականացնել ամսագիր ասւած բանը ընթերցող հասարակութեան լայն խաւերում, —ահա մի խնդիր, որ պէտք է լուծէր «Մուրճ»-ը։ Դա նոյն այն խնդիրն է, որ քսան տարի առաջ դրւած էր լրագրութեան համար, որը դեռ ևս այն ժողովրդականութիւնը չունէր, ինչ նա ունի այժմ։ լրագիրը դեռ ևս անհրաժեշտ պահանջ չէր ընդհանրութեան համար այն ժամանակ, ինչպէս ամսագիրը չէր ընդհանրութեան համար, երբ «Մուրճ»-ը սկսեց հրատարակւել։

Այդ խնդիրի հետ միասին «Մուրճ»-ը ունէր լուծելու մի այլ խնդիր։ Ամսագիրը պէտք է բաւականութիւն տայ աւելի զարդացած, ուրեմն աւելի պահանջող հասարակութեան։ Ամենապահանջող ընթերցող հասարակութիւնը՝ ամսագրի հասարակութիւնն է և Խնդով «Մուրճ»-ը պէտք է բաւարարութիւն տար այդ հասարակութեան նրանով, կը պատասխանենք մենք, որ «Մուրճ»-ը կը ներկայացնէր մի ավնյայտնի յառաջդիմութիւն մեր պարբերական մամուլի մէջ, առհասարակի Ոչ մրցութիւնը իրան նման ուուսաց կամ արտասահմանեան ամսագիրների հետ պէտք է դէսլ իրան քաշէր հայ ինտելիգէնսա հասարակութիւնը, այլ այն գաղափարական շահը, որ պէտք է կապի ինտելիգէնսա հասարակութիւնը հայրե-

նական մահուլի և գրականութեան յառաջդիմութեան հետ Երբ այդ յառաջդիմութիւնը կատարւում է՝ կարելի է նաև ապահով լինել ինտելիգենցիայի համակրութեան վերայ, եթէ այդ ինտելիգենցիան արժանի է իւր անւան։ Ամեն ուրիշ միջոց՝ արհետական է, միայն յառաջդիմութիւնն է, որ կարող է լինել թէ նպատակ և թէ միջոց։ իսկ այդ յառաջդիմութիւնը իրազործելու համար մենք ծառայացրել ենք մեր ոգու և մոքի ամբողջ կարողութիւնը նաև հակառակ իշխող կարծիքներին։

Յառաջդիմութիւնը անհնարին է առանց մոքերը գրականօրէն մշակելու և հասարակական, գրական, քաղաքական երեսովթները գիտնականօրէն քննելու և ուսումնասիրելու։ Ամեն յառաջդիմութիւնից առաջ հասարակական կեանքի մէջ՝ լինում է առաջ գրական ութեան յառաջդիմութիւն, որովհետեւ կեանքի մէջ յառաջդիմութիւն անելու համար հարկաւոր է որոշ ծրագրով գործել, իսկ ծրագրիները ոչ այլ ինչ են, եթէ ոչ համառութիւններ գրականութեան մէջ արծարծած, մշակւած, պարզած, ընդհանրութեան համար մատչելի դարձրած խնդիրների և սոցալուծելու միջոցների։ գործելու համար հարկաւոր են կուսակցութիւններ, բայց կուսակցութիւնները ոչինչ են առանց ծրագրիների, իսկ ծրագրիները բղխում են առաջընթաց գրականութիւնից։

Արդ, այս երեսուն տարիների ընթացքում, մեր նոր գրականութեան սկսելու օրից, մոքերի ու գրականութեան շարժումներ մենք կարող ենք վկայել զլիսա որապէս երկու շրջանների համար՝ «Հիւսիսափայլ»-ի 1858—64 և «Մշակ» լրագրի, գլխաւորապէս սորա գոյութեան առաջին տասնեակ տարիներում։ Մեր գրականութեան համար միայն այդ երկու շրջանները կարող ենք բեղմնաւոր համարւել, այդ շրջաններումն են արծարծւած մեր մէջ նոր տեսակէտներ հասարակական կեանքի մասին, այդ շրջաններումն են սկսել արթնանալ հասարակութիւնները գրականութեան համար, այդ շրջաններումն է, սկսել նոր բանաստեղծական ու վիպական գրականութիւնը, այդ ժամանակներում նոր սերունդը սկսեց մասնակցել մահուլին։ Մի խօսքով՝ դպքա շրջաններ են, որոնք նշանաւոր սկզբնաւորութիւնների շրջաններ կարելի է համարել։

Բոյց գոյութիւն ունեցող մամուլը 80-ական թւականներին այլ ևս բաւարարութիւն չը տուեց սկզբնական պերիոդները անցկացած սերունդներին։ Լրագրութիւնը, որ միակ էր ասպարհովի վերայ, անբաւարար հանդիսացաւ գրականութեանը նոր մղում և խնդիրների մշակութեան նոր ծաւալ տալու համար։ Բարձր հրատարակախօսութիւնը երկրորդական դարձաւ, գրականութիւնը՝ զարգանալու համար՝ այլ ևս դաշտ չէր գտնում լրագրական էջերում։ Մի խօսքով մամուլը չէր առաջադիմում, այլ սառ ած մնացել էր այն շրջանակների մէջ, որ որոշած էր առաջ, այս զանազանութեամբ սակայն, որ գրական ոյժերն էլ գրեթէ յետ էին քաշել գրելուց, ոչ մի խրախոյս չը գտնելով մամուլի բունած ընթացքից, և ոչ էլ նոր գրողների հոսանք էր նկատուում։

Ահա այս հանգամանքների մէջ է, որ «Մուրճ»-ը սկսեց հրատարակւել, ցանկութիւն յայտնելով շարունակել ընդհատած գրական շարժումը։ Դորա համար պէտք էր ընդլայնել և խորացնել ընդհանուր խնդիրների քննութիւնը, զգալ տալ եղածի անբաւարարութիւնը, խրախուսել ուսումնասիրական ոգին, արծարծել անաշառութիւնը գրական քննութեան մէջ, բայց ամեն բանում անցկացնելով յառաջդիմական ոգին։ պէտք էր գրեթէ ստեղծել գրական քննադատութիւնը մեր մէջ, պէտք էր ընդհանուր խնդիրների համար նոր-նորից մի սիստեմ և նոր տեսակէտներ մշակել, պէտք էր իւր բաժինների բազմակողմանիութիւնով ժամանակի պահանջների համեմատ հայկական ամսագրի տիպը ստեղծել, որի համար մեր նախկին ամսագիրները կամ այժմ եղած ամսաթերթերը օրինակ չեն կարող մեզ ծառայել, և այդ ամենով միասին «Մուրճ»-ը թէ հայկական մամուլի և թէ գրականութեան ու ազգի յառաջաւոր մոքի մի օրդան դարձնել։

Մենք չենք ուզում դորանով մեր կատարածի ամփոփումն անել, այլ միայն գծել այն, ինչին ձգտել ենք։ Այդ ձգտումի արդիւնքները այժմ ամփոփւած են «Մուրճ»-ի շորս տարւայ հատորների մէջ և դրւած են ընթերցողների առաջ։ Թող սոքա վկայեն թէ որքան է կարողացել «Մուրճ»-ը իրագործել իւր մոտադրութիւնները մինչ այժմ։ մենք միայն կ'ասենք, որ անսայթապ կերպով նոյն շաւզով պէտք է ընթանանք նաև այսուհետեւ, ունենալով ընթեր-

ցող հասարակութեան մէջ դէպի «Մուրճ»-ը աճող համակրութիւնը և այն հաւատը, որ մենք ունենք դէպի «Մուրճ»-ի կատարած և կատարելիք լաւ դերը:

Ամենաշօշափելի ապացոյցը այն բանի, որ «Մուրճ»-ով սկսեց գրականական մի նոր հոսանք, մենք տեսնում ենք նրանում, որ բազմաթիւ գրողներ «Մուրճ»-ի միջոցով գրական ասպարէզ դուրս եկան, գրողներ, որոնք, սակաւ բացառութիւններով, կամ շատ փոքր գրական անցեալ ունեին և կամ առաջին անգամ «Մուրճ»-ում երևացին:

Սկսելով «Մուրճ»-ի հրատարակութիւնը, շորս տարի առաջ, մենք, որպէս վերը նկատեցինք չունէինք աշխատակիցների կազմակերպած մի խումբ. և չը զիտէինք թէ ովքեր լինելու մեր տեղական աշխատակիցները. մենք զիտէինք միայն որ տեղական աշխատակիցներ «Մուրճ»-ի համար կը լինեն նախ անպայման յառաջդիմականներ և երկրորդ՝ ովքեր «համամիտ են մեր մամուլի շրջանակները ընդլայնելու և խնդիրների քննութիւնը խորացնելու անհրաժշտութեան մասին» Մեր յոյսերը, ինչպէս այժմ վկայել կարող ենք, անհիմն չեին ջը նայած մեզ շրջապատող մամուլի կողմից դէպի «Մուրճ»-ը բռնած դիրքին, աշխատակիցների հոսանքը «Մուրճ»-ում սկզբից մինչ այսօր եղել է անընդհատ: Անկարելի է դորանում չը տեսնել մի զարկ, որ կարող է բղխել միայն գաղափարից: Մեզ շրջապատող մամուլի ոչ առերես անտարբերութիւնը, ոչ էլ թշնամնելը կարողացան ներդործել այն հոսանքի վերայ, որ իւր ուղին բնականօրէն բռնեց դէպի «Մուրճ»-ը: Սա մի իրողութիւն է, որ, չը նայած խմբագրութեան կողմից ցոյց տւած մեծ խստութեան՝ սկզբից մինչ այսօր «Մուրճ»-ի ամեն մի համարը իւր հետ բերել է մի, երկու, երեք, երբեմն մինչեւ անգամ աւելի նոր աշխատակիցների անուններ: Եւ անկարես չէ այն, որ նոցանից շատ շատերը նոյն իսկ նորերից՝ ոչ միայն «Մուրճ»-ում, այլ դորանով իսկ առհասարակ գրականութեան մէջ, գնահատութիւն են դտել, կապելով իրանց անունները մեր գրականութեան որ և է ճիւղի հետ:

Խօսելով աշխատակիցների մասին, մենք պարտականութիւն

ենք համարում առանձին կերպով ցիշել այն անձերի մասին, որոնց աշխատութիւնը արտավայտուել է ոչ միայն գրչով, այլ և խորհուրդներով, իրանց մօտ յարաբերութիւններով ամսագրիս խմբագրութեան հետ:

«Մուրճա-ի աշխատակիցների մէջ դեռ առաջին տարում սկսեց մի յայտնի գոտումն. դանեցին աշխատակիցներ, որոնք, ինկատի ունենալով ամսագրի ուղղութիւնը, գործով ցայց տւին ցանկութիւն՝ խմբագրութեան հետ սերտ, գաղափարական յարաբերութիւն ունենալ ջտման այդ պրոցեսը ժամանակի ընթացքում առաջացրեց այն, ինչ կարող ենք անւանել «Մուրճա-ի սկզբնական խումբը» Խնքնաբերաբար և ժամանակի ընթացքում կազմւած այդ խումբն է ահա, որով յետոյ կարելի եղաւ սկիզբ դնել մի կազմակերպութեան, որ մենք անւանում ենք «Մուրճա-ի խմբագրական խորհուրդ» Միջոց տալ որ «Մուրճա-ի հետ գաղափարական սերտ մտերմութիւն ունեցողները կանոնաւոր նիստերում ի մի հաւաքւեն և իրանց կարծիքները յայտնեն կամ տպագրելու նշանակւած և կամ տպւած գրւածների մասին, և որ առհասարակ մոռքերի փոխանակութիւն կատարեի, —ահա «Մուրճա-ի խմբագրական խորհրդի նշանակութիւնը»:

Մի այդպիսի օգնական մարմնի կազմելը եղել է մեր ցանկութիւններից մէկը դեռ ևս «Մուրճա-ը հիմնելու օրից» բայց բնական է որ նորա գլուխ բերելը կարող էր կատարել միայն ժամանակով, երբ գործի ընթացքը ինքը ինքնաբերաբար կը լաւաշացնէր մի խումբ, որը «Մուրճա-ի մէջ կը գտնէր օրգանի էական յատկութիւնները և կը հաւաքւեր այդ օրգանի շուրջը»:

Բայց որքան էլ մեր սկզբնական ցանկութիւնն էր խմբագրական խորհուրդ ունենալ, այնուամենայնիւ դորան կազմելու վաստակը պատկանում է նաև այն աշխատակիցներին, որոնք առաջինները համախմբեցին «Մուրճա-ի իրր օրգանի շուրջը», որոնք ուրեմն առաջիններն էին որ հասունացրին այդ խնդիրը:

«Մուրճա-ի խմբագրական խորհրդի սկիզբը ընկնում է 1890թ. հոկտեմբերի 8-ին, և նորանում երկար կամ կարճ միջոցներով մինչ այժմ մասնակցութիւն են ունեցել, բացի մեզնից՝ ութուրիշ անձեր զանազան ժամանակներից սկսած, աւելի կամ պակաս տեղութեամբ, համաձայն մասնակցողների ազատ կամքին:

Որքան էլ ազատ հիմունքների վերայ է հիմնած խմբագրական խորհրդին մասնակցելը, որքան էլ խորհուրդը լոկ խորհրդատու և ըստ մեզ հէնց դորա այդ բնաւորութեան պատճառով, բայց համերաշխութեան և փոխադարձ հաւատի և յարգանքի վերայ հիմնած մի ազգայինի մարմնի կարեւորութիւնը մենք շատ ենք գնահատում: Հետեւ այսուհետեւ մեր ձգտումը կը լինի «Մուրճ»-ի այդ նոր սկսած տրագիցիաները շարունակել, որքան միայն հնարաւոր է, և դորանով խմբագրութիւնը զօրեղացնել օգնական և գաղափարակից խորհրդատու ոյժերով: Անկախ դորանից խմբագրատում մնում է և կը մնայ մի կենարոն ամսագրի բոլոր աշխատակիցների համար, որոնց հետ հաղորդակցութիւնից անցեալի նման նաև ապագայում ապատում ենք նոյնքան օգուաներ ամսագրի համար:

Սորանով երկրորդ անգամն է որ սուիթ ենք ունենում հրապարակական հաշիւ ներկայացնել «Մուրճ»-ի գործունէութեան մասին: Մեր առաջին հաշիւը վերաբերում էր ամսագրիս առաջին տարւան: Այդ ժամանակւանից դէս «Մուրճ»-ը, մնալով իւր ծաւալով նոյնը, ինչ որ էր, զգալի կերպով ճոխացել է նիւթերի բազմակողմանիութեան կողմից: Այդ յառաջաղիքութիւնը կատարել է տարին տարւայ վերայ, որովհետեւ միայն ժամանակի ընթացքում կարող էին գտնել համապատասխան աշխատակիցներ: Նոր զարդացած բաժիններն են՝ զիտուականը, քննադատականը, թղթակցութիւնները Ռուսաստանից, Արտասահմանեան քրոնիկը, Ֆէլլուսոնը:

Գիտական յօդւածները այժմ բռնում են այն տեղը, ինչ առաջին տարւում բռնում էին մանկավարժական յօդւածները, որոնք մի ընդհանուր կրթական ամսագրում չպէտք է մեծ տեղ զրաւեն: Գիտական բաժինը, ըստ իւր հերթին, այժմ երկու տեսակի են բաժնեւել՝ ընդհանուր կրթական յօդւածներ, գլխաւորապէս քննադիտութիւնից, և գիտական քրոնիկ, վերջինիս նպատակն է ընթերցողներին ընթացիկս պահել գլխաւորապէս կիրառական գիտութիւնների յառաջդիմութեան, նոր թէօրիաների ու գիւտերի հետ:

Գիտական բաժնի համար մինչ այժմ աշխատել են պ. պ. Ա. Քալաղեան, բժշկ. պ. Արծըունի և բժ. Ն. Ռոմիկեան. իսկ գիտա-

կան քրոնիկը իւր վերայ է առնում վարել պ. Մ. Տէր-Անդրէասեան։  
Մի առանձին շժաւալ է ստացել «Մուրճ»-ում քննադատական  
բաժինը, որից առաջին տարում զոյութիւն ունէր գրախօսու-  
թիւնը, բացի մի-մի փոքրիկ փորձերցից գրական ազատ  
քննութեան Դրախօսութեան համար սկզբում «Մուրճ»-ը ունէր  
աշխատակիցներ ժողովրդական և բելետրիստիկային պատկանող  
գրքեր գրախօսելու համար։ Ժամանակով «Մուրճ»-ին մերձեցան  
նաև հայոց հին մատենագրութեան և առհասարակ լեզվի մասնա-  
գէտներ։ այնպէս որ մանաւանդ ներկայ 1892 թւականին Դրախօ-  
սական բաժնում տպւեցին ընդարձակ քննութիւններ հայերէնագէտ  
մասնագէտների ձեռօռվ. դորանով մասամբ վնասուեց գրքերի հաշվե-  
տը ութիւնը՝ լիակատարութեան կողմից։ Բայց մենք յոյս ունենք,  
որ ապագայում, աշխատակիցների աւելի կանոնաւոր խմբի աջակ-  
ցութեամբ՝ այս տարւայ պահասորդը կը լրացնենք։

Այս վերջին՝ երկու տարիներում «Մուրճ»-ը ձեռնամուխ եղաւ  
մեր նոր գրականութեան այսպէս ասած դասական հեղինակների  
քննադատութեան դորձին, որից մի թոյլ փորձ կատարել էր գեռ  
ևս առաջին տարում, պ. Պերճ Պոչշեանի դործքերի վերաբերմամբ  
մի պատհանական աշխատակցի կողմից։ Այժմ, այս վերջին երկու  
տարիներում պ. Եղիշէ Մադաթեանն է որ այս ամսագրի էջերում  
տուեց ընդարձակ ուսումնասիրութիւններ պ. Սմբատ Շահաղիզեանի  
և նորոգ հանդուցեալ Խափաէլ Պատկանեանի։ Մենք քիչ կը լինենք  
մեղանչած ճշմարտութեան դէմ, եթէ ասելու լինենք որ հէնց  
այդ վերջին փորձերով գրականական-գեղագիտական քննադատու-  
թեան լուրջ սկսնաւորութիւն է դնում մեր մէջ։

«Մուրճ»-ի վիպական մասը թելադրում է մեզ մի քանի խօսք  
ասելու։ Այդ մասում մինչ այժմ աշխատակցել են թէ հայ գրա-  
կանութեան մէջ աւելի վաղուց ծանօթ հեղինակներ և թէ նոր  
գրողներ, և թէ թարգմանաբար երեւացել են այլազգի հեղինակ-  
ներ։ «Մուրճ»-ը հրատարակելու սկզբի ամսոց մեր դիտաւորութիւնը  
այդ նկատմամբ այնպէս էինք յայտնել, թէ աւելի ուշք կը գարձ-  
նենք մեր ինքնուրոյն հեղինակների, քան թէ թարգմանականների  
վերայ Մենք այդպէս էլ վարւեցինք, միայն ներկայ 1892 թւականին  
է որ թարգմանականը գերիշտող էր «Մուրճ»-ի վիպական մասում։

Խնդիրը սա է թէ ինչ տեսակէս պէտք էր պահպանել «Մուրճ»-ում վիպական դրւածքների վերաբերմամբ, այդ բաժնին զարկ տալու համար Վ.Հպեր, ուր արտափայլում են կեանքի նոր հոսանքները և շօշափւում ժամանակակից հասարակական խնդիրները և խդէալները, դրա են, որ աւելի հետաքրքրել են մեզ, որքանով որ նոքա գրւած են գնահատելի տաղանդով։ Բայց ի հարկէ միշտ մեղնից չէ կախւած եղել այդ ցանկութիւնը իրագործելու Որպէս զի ամսագրի վիպական բաժինը իւր նիւթերով, հիմնական ուղղութիւնով և գեղարւեսով։ Մի մարմին կազմի ամսագրում քարոզած մաքերի հետ, պէտք է մի սերունդ որ կրթւած լինի այդ ամսագրի պաշտպանած հայեացքներով՝ ընդհանուր և կենսական խնդիրների ու գեղարւեսոի նկատմամբ։ Դորանով բաւական է ասւած, որ «Մուրճ»-ի համար գեռ վաղ է այսպէս ասած՝ իւր վիպասաններն ունենալ իրրև մշուական աշխատակիցներ։ Մինչ այժմ ինչ կարող էինք անել, դա ընտրութեան գործ էր՝ առաջարկւած անթիւ վիպական գրւածքներից ընորել այն ինչ խրախուսելու արժանի է զատւել և, հնարաւոր եղածին չափ, դէմ կենալ ըստ երևութիւն ապագայ չը խոստացողներին։

Թարգմանական վէպերի մէջ առանձնապէս շեշտելու է՝ վրաց գրականութիւնից տւածները։ Մենք կամեցել ենք դորանով հայ և վրացի ազգերի իրար մերձնենալու գործին նպաստել, ընտրելով իրար հետ աւելի մօտ ծանօթացնելու ճանապարհը։ Քան թէ իրար վերաց բամբասել և, իրարից անտեղեակ՝ միմեանց ծաղրել, — աւելի լաւ է իրար ճանաչել. և մենք յոյս ունենք որ իրար հետ գրականութեան միջոցով ծանօթանալուց կը յառաջանայ գրականական փոխադարձ հազորդակցութիւն և աւելի լուրջ քննադատութիւն, որ հեռու կը լինի նախապաշարումից յառաջացած բամբասանքներից։ Մինչ այժմ թարգմանած երկու վիպական գրւածների վերաց (Կացիա-Աղամիանի և Ելիսօ) գալ տարի կ'աւելանայ, ինչպէս յոյս ունենք, երրորդը (Ելգուջա, գործ Մոշխուբարիձէի)։

Եւրոպական վիպասանութիւնից ցայժմ «Մուրճ»-ը տաել է միայն մէկ նշանաւորը «Առանց դաւանանքին», որի շարունակութիւնը կը տրւի 1893 թւական։ Այդ վէպով մենք կամեցանք մեր ընթերցողներին հնարաւորութիւն տալ ծանօթանալու հոգեբանական մի

ռոմանի և միւնոյն ժամանակ մի վերին աստիճանի բազմակողմանի լուսաւորւած հեղինակի գեղարւեստական և հասարակական խնդիրների մասին ունեցած հայեացքների հետ:

Ոտանաւոր բանաստեղծութեան մասին մենք ոչինչ չունենք աւելացնելու 1889 թւականին մեր գրածի վերայ, եթէ ոչ այն, որ այժմ ակնյատնի կերպով տեսնում ենք թէ որքան անհիմն չեն մեր լոգսերը, որ դնում էինք «Մուրճ»-ի այդ բաժնի վերայ: Այդ բաժինը շարունակել է առաջւայ պէս կենդանի մնալ շնորհիւ մեր սկզբնական աշխատակիցների՝ գլխաւորապէս պ. պ. Աւոն Մանուկյանի, Ալ. Խատուրեանի (Արծիւեան), Արշալոյս Մխիթարեանի, որոնց միացել են այն ժամանակւանից դէս պ. Յովհաննէս Թումանեանց և պ. Լեռենց:

Քաղաքան տեսութիւնը վարւել է միանգամայն նոյն ոգով, ինչպէս և առաջ: Մենք պէտք է սակայն գանգատւենք որ չափազանց բազմազբաղ դրութիւնը մեզ չի թույլ տւել որ քաղաքական տեսութիւնը ամենայն կանոնաւորութաեմբ իւրաքանչիւր ամիս տայլինք Բայց «Մուրճ»-ի ընթերցողները կարող են ապահով լինել որ մեր տեսութիւնից չի վրիպել բարձր քաղաքականութեան վերաբերեալ որ և է կարևոր դէպք: Բացի դորանից կանոնաւոր կերպով այժմ տանւող Արտասահմանեան քրոնիկը, բացի իւր առանձին կոչումից՝ մասամբ լրացնում է նաև քաղաքական տեսութիւնը:

Ներկայ 1892 թւականին, շնորհիւ յատուկ աշխատակցի, կարելիութիւն եղաւ երաժշտական բաժին բաց անել և կանոնաւորապէս նորան վարել: Դորա համար մենք պարտական ենք պ. Գրիգոր Նահապետեանցին:

Դառնանք այժմ «Մուրճ»-ի երկու կարևորագոյն բաժիններին, որոնք ամենասերտ կապ ունեն ամսագրի ուղղութեան հետ՝ առաջնորդողները և ներքին Ցեսութիւնը: Առաջնորդող յօդւածներում մենք շարունակ շօշափել ենք և կը շարունակենք քննութեան առնել մեր կեանքի հիմնաւորագոյն խնդիրները: Այդ յօդւածների ներքին կապը մենք մի ժամանակ մի առանձին յօդւածի նիւթ կը դարձնենք. այսոեղ միայն կը շեշտենք, որ նոցանում մենք դնում ենք մեր լաւագոյն մոքերը մեր հասարակական յառաջդիմութեան խնդիրների վերաբերմում:

Ներքին տեսութիւնը անպակաս է եղել. նորա «Ամսաւայ քրո-  
նիկում մենք ընթերցողների առաջ դրել ենք ամսւայ ամենահաչքի  
ընկնող հասարակական խնդիրները և առանց որ և է տատանմունքի՝  
տւել մեր կարծիքները նոցա մասին: Կարող ենք ասել որ «Մուրճ»-ը  
ոչ մի գժւարութիւն չի կրել՝ առաջադրած խնդիրների նկատմամբ  
բռնել ամենակորուկ դիրք, միշտ աշխատելով լինել կարելիին չափ  
վիճակատար, իսկ վիճաբանութիւնների մէջ՝ ազնիւ և անաշառ-  
ւում է ընթերցողներից բղխած յաճախակի վկացութիւնները մեզ շատ  
անգամ համոզել են, որ այդ բաժինը ըստ արժանուոյն դնահատ-  
ւում է ընթերցող հասարակութիւնից:

Այս ամենով մենք շապասեցինք բոլորը. պ. Գր. Վարդանեանը  
շարունակեց տալ աշխատութիւններ տնտեսական հասարակական  
խնդիրների մասին. լոյս տեսան մի քանի լուրջ ուսումնասիրու-  
թիւններ հողային խնդիրների, պանդխառութեան և բանուոների  
մասին, աշխատակցութեամբ, բացի մեզնից՝ Յ. Սաղաթելիեանի,  
Անուշ. Քալանթարի, Գարեգին Խաժակնեանի, և մի շաբք տնտեսա-  
կան յօդւածներ մեր երկրի արդիւնաբերութիւններից:

Սորանով մենք կը վերջացնէինք «Մուրճ»-ի անցեալ չորսամեայ  
գործունէութեան հաշւէտութիւնը, եթէ առիթից չօգտաէինք  
ասելու թէ ինչ է մնում մեզ անելու «Մուրճ»-ի արտաքին կերպա-  
րանքը ամբողջացնելու համար:

«Մուրճ»-ի արտաքին կազմը լրացնելու համար, և մենք այդ  
շատ լաւ զգում ենք,—մինչ ալժմ պակասել են՝ մի կողմից դաւա-  
սական թղթակցութիւնները կամ գաւառական քրոնիկը, և միւս  
կողմից՝ թղթակցութիւնները Տաճկա-Հայաստանից: Մեր մշտական  
ընթերցողներին քաջ յայտնի կը լինի, որ մեր այս գանգատը նոր  
չէ և որ տարիներ առաջ մենք նոյնը ասել ենք: Գաւառական  
թղթակցութիւնների պակասելը մենք մեկնում ենք նրանով, որ  
գաւառական ինտելիգենցիայի մէջ դեռ շատ են սակաւ այնպիսի  
անհատներ, որոնք կարողանան մի ամբողջ նահանգի ներքին գոր-  
ծերին հետամուտ լինել և նոցա ընդհանուր տեսութիւնները տա-  
լով՝ ներգործել տեղական հասարակական կարծիքի վերայ: Եթէ

ինկատի առնելու լինենք, որ լրագրութիւնը իւր արդէն մի քանի տասնեակ տարիների անցեալով դեռ էլի գանգատների շրջանի մէջն է արժանաւոր թղթակիցների նկատմամբ, այն ժամանակ հասկանալի կը լինի ամսագրական թղթակիցների պակասութեան պատճառները։ Կրկնում ենք որ «Մուրճ»-ին հարկաւոր գաւառական թղթակցութիւնները պէտք է կրեն գաւառական կամ նահանգական տեսութիւնների բնաւորութիւնն

Վերջացնելով մեր տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր ընթերցողների ուշադրութիւնը դարձնել մի կարևոր հանգամանքի վերայ։ Խնտելիգէնսո հասարակութեան սպահանջները «Մուրճ»-ից շարունակ աճում են և մենք ինքներս աշխատում ենք աստիճանաբար լրացնել նկատած թերութիւնները։ Միւս կողմից աճում է նաև նոր աշխատակիցների հոսանքը։ Այս ամենը յառաջացնում է այս բնական պահանջը, որ «Մուրճ»-ի ծաւալը մեծանայ, եթէ չենք ուզում որ ամսագրի մի բաժինը վնասւի մի ուրիշ բաժնի օգտին Խնդիրը սա է, թէ կարող ենք արդեօք «Մուրճ»-ի այժմեան նիւնական կարողութիւնով կայդ պահանջներին բաւարարութիւն տալ ձշմարտութիւնը սա է, որ այս չորս տարւայ շրջանում ոչ մի տարւայ հաշիւ չի փակւել առանց զգալի դեֆիցիտի, չը նայած որ բաժանորդների թիւը ոչ թէ նւազել է, այլ աճել Բայց այդ աճումը բաւական չի եղել եղած անհրաժեշտ ծախքերը ծածկելու համար։ Եւ չը նայած զորան՝ «Մուրճ»-ի կայս չորսամեայ համագումարը անցնում է մեր խոստացածի սահմաններից։ մեր խոստացածն է եղել տարւայ ընթացքում տալ ամենապակասը 8 թերթ, այսինքն տարեկան 1536 երես, և առ տուաւելն միայն 10 թերթ, կամ տարին 1724 երես, բայց մեր տւածը ոչ մի տարում չի եղել խոստացածի նւազագոյնը, այլ միշտ աւելի։ Այս հանգամանքը հարկ է զնում «Մուրճ»-ին համակրողների և մանաւանդ այդ ամսագրի տւածից աւելին պահանջողների վերայ՝ աշխատել «Մուրճ»-ը տարածել իրանց շրջաններում և չը բաւականանալ ձրի խորհուրդներով։